Լիա Թևոսյան
ԵՄՀ իրավագիտության ամբիոնի վարիչի օգնական

ԳՐԱԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ. ԱՀԱԶԱՆԳ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ

Աշխատանքը և գիտական բարեխղճությունը, ստեղծագործ մտքի հետ զուգորդվելով, կարող են արդյունավետ արգասիքի հիմք դառնալ: Դրան հակառակ՝գրագողությունը (բանագողությունը) հանգեցնում է ստեղծարար մտքի «չորացման» և «անպտղության»:

Հոդվածում լուսաբանվել են գրագողություն հասկացությունը, վնասակար հետևանքները, այն կանխարգելելու եղանակներն ու միջոցները:

Ուսումնասիրությունը իրականացվել է «Մատենագիտական հղումների ընդհանուր պահանջները, կազմման կանոնները և տեղեկատվական կառավարումը» թեմայով Եվրասիա միջազգային համալսարանի ներբուհական գիտահետազոտական դրամաշնորհի հետազոտության շրջանակներում:

Հիմնաբառեր. գրագողություն, գիտական բարեխղճություն, յուրահատուկ գաղափար, մեթոդական ցուցումներ, ակադեմիական միջավայր:

Գիտության, գիտականության և գիտական էթիկայի համար գրագողությունը մեծ մարտահրավեր է: Համաձայնելով, որ այն համարվում է բնագրի ամենամեծ «թշնամին[1]» և լինելով ակադեմիական կանոնների ու գիտական բարեխղճության սկզբունքի խախտման ամենաշատ հանդիպող ձևերից մեկը՝ գրագողությունն ահազանգ է ակադեմիական միջավայրին ու, առաջին հերթին՝ գիտակրթական հաստատություններին:

Ակադեմիական կանոնների խախտման անազնիվ երևույթների հետազոտման համար արևմտյան հետազոտություններում օգտագործվում են

1 Տե՛սJeremy Lott "The Problem with Plagiarism".The New Atlantis, Number 16, Spring 2007, pp. 98-102. https://www.thenewatlantis.com/publications/the-problem-with-plagiarism

հետևյալ եզրույթները. academic dishonesty–ակադեմիական անազնվություն[1], academic integrity–ակադեմիական ազնվություն կամ ամբողջականություն[2], cheating behavior–խարդախություն, academic misconduct–ակադեմիական անբարեխիղճ վարքագիծ: Առավել լայն տարածում ունի plagiarism–գրագողություն, բանագողություն[3] եզրույթը: Ըստ Հրաչյա Աճառյանի ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի՝ գրագողություն նշանակում է ուրիշի ստեղծագործությունները մասամբ կամ ամբողջովին իր անունով ներկայացնելը՝ հրապարակելը, բանագողությունը[4]:

Գրագողությունը և բանագողությունը հոմանիշներ է դիտարկում Ա. Սուքիասյանը, ով բանագողությունը սահմանում է որպես գրագողություն (պլագիատ, բանագող, սեփական անունով ուրիշի երկերն ապօրինի օգտագործող): Հաշվի առնելով «գրագողություն» և «բանագողություն» բառերի իմաստային նմանությունը՝ սույն հետազոտության շրջանակներում մեր կողմից կդիտարկվի «գրագողություն» եզրույթը, որը առավել ընդգրկուն հասկացություն է և ըստ էության ավելի է համապատասխանում իրականության մեջ այդ երևույթի բազմաբնույթ գոյությանը:

Համաձայն Օքսֆորդի համալսարանի բնորոշման՝ պլագիարիզմ հասկացությունն իրենից ներկայացնում է մեկ ուրիշի աշխատանքը կամ գաղափարները որպես սեփական ներկայացնելը՝առանց երախտիքի խոսք հայտնելու հեղինակին, այսինքն՝առանց վկայակոչելու վերջինիս[5], անկախ այն հանգամանքից, թե հեղինակը տվե՞լ է իր համաձայնությունը, թե՞ ոչ: Այս սահմանման մեջ ընդգրկվում են բոլոր հրատարակված և չհրատարակված նյութերը և անկախ նրանից, թե դրանք ներկայացված են ձեռագի՞ր, տպագի՞ր, թե՞ էլեկտրոնային տարբերակով[6]:

«Գրագողություն» հասկացությանը անդրադառնում է նաև Merriam Webster բառարանը, համաձայն որի՝ գրագողություն է «ուրիշի մտքերը և՛ կամ բառերը գողանալը, որպես քո սեփական ներկայացնելը»: Պլագիատը պարզապես ուրիշ մարդկանց բառերի և՛ կամ գաղափարների օգտագործումն է, որից հետո, փոխանակ այն ներկայացվի հեղինակի անունով, ում պատկանում է, ով մտածել է դրա մասին, ձև է արվում, թե այդ բառերը և՛ կամ մտքերը պատկանում են տվյալ նյութը շարադրողին[7]:

Շատերը կարծում են, որ գրագողությունը մեկ ուրիշի աշխատանքի,այլոց յուրահատուկ գաղափարների պատճենումն է կամ փոխառությունը: Սակայն այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են «պատճեն»–ը, «փոխառութ–

1 Տե՛ս https://www.wpi.edu/about/policies/academic-integrity/dishonesty:
2 Տե՛ս https://www.mnsu.edu/cetl/teachingresources/articles/academicdishonesty.html:
3 Տե՛ս Անգլերեն-հայերեն բառարան: Հ.Ա. Ասմանգուլյան և Մ.Ի. Հովհաննիսյան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984: http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=65&dt=EN_HY&query=plagiarism
4 Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան: Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1969:http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A3%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B: (մուտք 29.06.2018)
5 Բացատրությունը հեղինակինն է:
6 Տե՛ս https://www.ox.ac.uk/students/academic/guidance/skills/plagiarism?wssl=1
7 Տե՛սhttps://www.scanmyessay.com/plagiarism/what-is-plagiarism.php

յուն»-ը կարող են քողարկել լուրջ հանցանքներ[1]:

Այսպիսով, plagiarism-ը հայերեն թարգմանաբար նշանակում է գրագողություն, բանագողություն[2]:

Անդրադառնալով Գ. Հովհաննիսյանի, Ն. Գալստյանի, Մ. Սողոմոնյանի և Մ. Մալխասյանի համահեղինակային մեթոդական ցուցումների մեջ ներկայացված «գրագողություն» եզրույթի հասկացությանը՝ կարող ենք փաստել, որ աշխատանքում օգտագործվող տվյալների, տեղեկության աղբյուրը չհիշատակելը համարվում է գրագողություն կամ հեղինակային իրավունքների խախտում, իսկ աղբյուրի մատենագիտական տվյալները թերի ներկայացնելը՝ կոպիտ սխալ[3]:

Գրագողություն եզրույթի մեկնաբանման հետաքրքիր մոտեցում է ներկայացված նաև ավելի քան 3000 տարի առաջ ստեղծված Հին Կտակարանում, համաձայն որի «...եթէ մէկը բան աւելացնէ սորանց վերայ, Աստուած կ՛աւելացնէ նորա վերայ այն պատուհասները, որ այս գրքումը գրուած են: Եւ եթէ մէկն այս գրքի մարգարէութեան խօսքերիցը բան պակասեցնէ, Աստուած կ՛պակասեցնէ նորա բաժինը կեանքի գրքիցը, և սուրբ քաղաքիցը, և այս գրքում գրուածներիցը»[4].: Աստվածաշնչյան այս տողերում, որոնք մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և մեծ արժեքը, կարող ենք գտնել գրագողության արգելման ակունքները, որտեղ, մեր կարծիքով՝ Աստվածաշնչի բարոյականության լույսի ներքո արգելվում է ոչ միայն բնագրի էության փոփոխությունը, այլ նաև ներկայացված է արգելքը շրջանցելու դեպքում սահմանված պատիժը:

Այսպիսով, անդրադարձ կատարելով տարբեր հեղինակների կողմից գրագողություն (plagiarism) եզրույթի հասկացության մեկնաբանմանը՝ կարող ենք փաստել, որ այդ հարցում բոլոր հեղինակների մոտեցումը նույնն է և էականորեն չի տարբերվում իրարից:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ գրագողության դեպքում անձը ակադեմիական անազնվություն է դրսևորում՝ մեկ այլ հեղինակի կողմից ստեղծված և առաջադրված գաղափարները, տեղեկությունները, տվյալները (և այլն) ներկայացնելով իբրև սեփականը, չհիշատակելով հեղինակին, երախտիքի խոսք չհայտնելով նրան և նրա հեղինակային իրավունքներին:

Լինելով բացասական երևույթ՝ գրագողությունը մի կողմից, ոտնահարում է հեղինակի գույքային իրավունքների հետ չկապված անձնական, ոչ գույքային և մյուս կողմից՝ գույքային իրավունքներն ու գիտական էթիկան,

1 Տես "What is Plagiarism?" Article. Published May 18, 2017: http://www.plagiarism.org/article/what-is-plagiarism:

2 Տես նաև Անգլերեն-հայերեն բառարան: Հ. Ա. Ասմանգուլյանև Մ. Ի. Հովհաննիսյան: «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984, էջ 702: http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=65&dt=EN_HY&query=plagiarism:

3 Տես Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. Մեթոդական ցուցումներ /Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Սողոմոնյան Մ., Մալխասյան Մ.; ԵՊՀ ուսանողական գիտական ընկերություն.-Երևան: ԵՊՀ հրատ., 2014, էջ 30:

4 Տես Աստվածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների Եբրայական և Յունական բնագրերից թարգմանուած, Աստվածաշնչի վերատպում 1896 թվականի արևելահայերեն «Արարատ» հրատարակությունից: Յովհաննէս Առաքեալի Յայտնութիւնը, ԳԼ. ԻԲ (22) 2016թ., էջ 4424:

իսկ որպես գողության և խաբեության ձև՝ ոտնահարում է անձի արժանապատվությունը, հանրային բարոյականության նորմերը: Կարող ենք փաստել, որ այս ամենն արհեստական խոչընդոտ է հանդիսանում և չի չթողնում, որ հեղինակը զարգանա կամ կանոնավոր կերպով օգտվի իր ստեղծագործությունից:

Եթե ընդհանրացնենք վերը նշված գրագողության կամ հեղինակային իրավունքների խախտման փաստը, ապա կարող ենք ասել, որ որոշ հեղինակներ գրագողությունը և հեղինակային իրավունքների խախտումը նույնական չեն համարում, թեև գտնում են, որ որոշ դեպքերում դրանք կարող են համընկնել[1]:

Բացի այն, որ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը հստակ սահմանում է հեղինակային իրավունքների խախտման դեպքերը, առանձին հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտում համարվող գործողությունների շարքում որպես հեղինակային իրավունքի խախտում է դիտարկում նաև գրագողությունը[2] (65-րդ հոդվածի 4-րդ կետ). «Ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում են գրագողություն»: Այլ հարց է, որ գրագողության դեպքում բացակայում է պատասխանատվության եղանակի օրենսդրական ամրագրումը:

Գրագողության լայն տարածումն ու դրա միջոցների, ձևերի կատարելագործումն արժեզրկում են գիտությունն ու գիտական գործունեությունն ընդհանրապես և վկայում են, որ գիտական գործունեությամբ զբաղվողը երաշխավորված չէ վայելելու իր երկար տարիների մտավոր, ստեղծագործական աշխատանքի արդյունքը, որ «հրաշքով» չի յուրացվի մեկ ուրիշի կողմից[3]:

Լինելով իրական վտանգ ու մարտահրավեր թե՛ հասարակության, թե՛ գիտության համար՝ վերջին քսանամյակում տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի՝ որպես տեղեկատվության պահպանման և փոխանցման աղբյուրի տարածումն էապես ավելացրել է ոչ միայն ակադեմիական անազնվության դրսևորման չափերը, այլ նաև՝ ձևերը[4]: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հանգեցրել է գրագողության ձևերի, միջոցների բազմազանեցմանն ու կատարելագործմանը, և այսօր ար-

1 Տես Հովհաննիսյան Գ., Գալստյան Ն., Սողոմոնյան Մ., Մալխասյան Մ., նշվ.աշխ., էջ 48:
2 Տես Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին ՀՀ օրենքը, ընդունված 15.06.2006, ՀՀՊՏ 2006.07.12/38(493) Հոդ.816, փոփոխություններով և լրացումներով 30.09.2013:
3 Տես Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները..., էջ 47:
4 Տես Zorana Ercegovac and John V. Richardson, Jr.,"Academic Dishonesty, Plagiarism Included, in the Digital Age: A Literature Review," College and Research Libraries v. 65 no 4 (July 2004), p. 301-318; Stephanie Etter, Jackie J. Cramer, Seth Finn, "Origins of Academic Dishonesty: Ethical Orientations and Personality Factors Associated with Attitudes about Cheating with Information Technology", Journal of Reseach on Technology in Education, Vol. 39, No. 2. (2006), pp. 133-155. // Անտոնյան Քրիստինե, Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում: Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան:

դեն «մի՛ խաբիր» արտահայտությունը փոխարինվել է «մի՛ բացահայտվիր» արտահայտությամբ[1]: Որպես օրինակ նշենք, որ Օքսֆորդի համալսարանը առանձնացնում է գրագողության՝ դիտավորությամբ, անզգուշությամբ կամ ոչ դիտավորությամբ կատարված տեսակներ[2]: Համաձայն քննությունների կանոնակարգի՝դիտավորյալ կամ անխոհեմ գրագողությունը կարգապահական հանցագործություն է: Ուրեմն՝ կարգապահական հանցագործությունը դիտարկվում է որպես դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ գրագողություն:

Այսպիսով, ակադեմիական միջավայրում գրագողության կանխարգելումը դիտարկվում է որպես ժողովրդավարական հասարակության բարոյական և քաղաքական առաջնահերթություն, որը նպատակաուղղված է ոչ միայն ակադեմիական ներկայացուցիչների գործունեության, գրագողության կանխարգելմանն ուղղված օրենքների, լոկալ իրավական ակտերի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի, այլ նաև մարդկային գիտակցության ու նրա ստեղծած արժեքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը և դրսևորմանը, մարդու իրավունքների, այդ թվում՝ մտավոր սեփականության պաշտպանությանը:

Քանի որ կրթական միջավայրն ըստ էության այն տարածքն է, որտեղ հենց վերլուծվում, քննարկվում, դաստիարակվում և տարածվում են «ազնվությունը», «արդարությունը», «հարգանքը» և մյուս բարոյական նորմերն ու արժեքները[3], անհրաժեշտ է, որպեսզի այդ միջավայրում (և ոչ միայն) վերհանվի գրագողությունը՝ որպես հանցանք, սոցիալական մտահոգիչ երևույթ, մարտահրավեր՝ ուղղված ակադեմիական միջավայրին, և բացահայտվեն այն ծնող պատճառները:

Գրագողության բացահայտման ճանապարհին կարևորվում են գիտակրթական միջավայրում գրագողության աճին նպաստող հիմնական պատճառները: Ըստ մեզ՝ նման պատճառներ են՝

- բազմաթիվ էլեկտրոնային տվյալների բազաների առկայությունը, հետազոտողների հեշտորեն մուտք գործելը տվյալների բազա, որտեղ նրանք գտնում և ներբեռնում են արդեն իսկ պատրաստի աշխատանքներ, հետազոտություններ և դրանք փոխանցում են որպես իրենցը[4],
- հատուցման դիմաց հետազոտություններ պատրաստողներին վարձելու հեշտությունը,
- իրազեկման գործիքների բացակայությունը,
- որակի ապահովման կենտրոնների (կենտրոնը դիտարկվում է որպես կանոնակարգող օղակ)՝ դիտարկվող հարցի վերաբերյալ թերի

1 Տես Lathrop, A., Foss, K.E., "Student Cheating and Plagiarism in the Internet Era: A Wake-up Call". Libraries Unlimited, Englewood, Colorado, 2000: // Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները. Մեթոդական ցուցումներ ..., էջ 47:

2 Տես https://www.ox.ac.uk/students/academic/guidance/skills/plagiarism?wssl=1 (մուտք 09.05.2018)

3 Տես Անտոնյան Քրիստինե, Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում: Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան:

4 Տես "Plagiarism and the Internet": How Technology Affects Cheatinghttps://unicheck.com/blog/plagiarism-and-the-internet:

կամ ամբողջապես կանոնակարգված չլինելը,
- գրագողության ստուգման տեղեկատվական համակարգերի բացակայությունը,
- գիտական շարադրանքին նվիրված դասընթացների բացակայությունը[1],
- գրագողության կանխարգելման և պատժի բացակայությունը:
- Գրագողության աճին նպաստող և վերը նշված հիմնական պատճառները սպառիչ չեն կարող լինել, սակայն դրանք հիմնական խթան հանդիսացող առավել էական կետերն են:

Ճիշտ է, ակադեմիական մշակույթը մի կողմից վերաբերում է արժեքներին և հավատալիքներին, որոնք գոյություն ունեն բարձրագույն կրթական հաստատություններում, սակայն մյուս կողմից՝դրանք էլ ներառում են այն անուղղակի օրենքներն ու կարգավորման կառուցակարգերը (մեխանիզմները), որոնք կիրառելի են դասախոսների կամ ուսանողների կողմից այս կամ այն վարքագծի դրսևորման ժամանակ[2]:

Գրագողությունը համարելով գիտակրթական միջավայրի համար լուրջ մարտահրավեր՝ անհրաժեշտ ենք համարում մշակել կանխարգելմանն ուղղված կառուցակարգեր, ինչպիսիք են օրինակ՝
- գիտակրթական միջավայրում որակի ապահովման կենտրոններ ստեղծելը, որոնք առավել հետևողական և խորքային կզբաղվեն ակադեմիական ազնվության խաթարմանն ուղղված գործողությունների կանխարգելման հարցերով, այդ թվում՝ փաստաթղթերի մշակման տեսքով, ինչպես որ օրինակ՝ Իսպանիայի Վալենսիայի համալսարանում այդ հարցերով առանձին խորհուրդ է զբաղվում “Councilof Writing Program Administrators3”,
- գիտակրթական միջավայրերում որակի ապահովման ինստիտուտների ներդրումը և կիրառումը՝ գրագողության ստուգման տեղեկատվական համակարգերի միջոցով,
- գիտակրթական միջավայրերի, ուսանողների, հետազոտողների և առհասարակ գիտությամբ զբաղվողների համար առանց առցանց դասընթացներ ստեղծելը: Շատ ուսանողներ մեղադրվում են գրագողության մեջ, քանի որ նրանք պարզապես չեն հասկանում և հետևաբար, չգիտեն՝ ինչպես խուսափել դրանից4,
- նկատի ունենալով, որ դասավանդողները՝ որպես «կրթողներ» և ուսանողները՝ որպես «կրթվողներ», իրենց գործունեության միջավայրում կրում են ազնիվ վարվելակերպի պահպանման «սուրբ» պարտականություն[5], կրթության ուղղակի շահառուների՝ դասախոսների,

1 Տես Գրագողությունը հայաստանյան բուհերում. Ինչպե՞ս քանդել թնջուկը: «Խաչմերուկ բանավիճային ակումբ» ՀԿԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն,Երևան 2011, էջ 14:

2 Տես Անտոնյան Քրիստինե, Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական համակարգում: Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան, էջ 6:

3 Տես Jesús Tronch Pérez, Avoiding plagiarism.https://www.uv.es/tronch/stu/Avoiding_plagiarism.html:

4 Տես“Understanding Plagiarism”, videos. http://www.plagiarism.org/understanding-plagiarism:

5 Տես Անտոնյան Քրիստինե, Ակադեմիական անազնվության դրսևորումները ՀՀ բուհական

ուսանողների և կրթության ադմինիստրատորների ակադեմիական ազնվության վերաբերյալ ժամանակակից միջոցների կիրառման մասին ընթացիկ վերապատրաստումներ կազմակերպելը,

- գիտակրթական միջավայրերի անդամներին գրագողության համար պատասխանատվության ենթարկելը (օրինակ՝ ճիշտ չէ, երբ ուսանողը գալիս է համալսարան, որպեսզի սովորի, իմանա և խոսի իր սեփական մտքերով, այլ ոչ թե պարզապես վերարտադրի ուրիշների կարծիքները, իսկ հետո այն վերագրի իրեն և պատասխանատվություն չկրի),
- հաճախակի հետազոտություններ իրականացնելը, որը հնարավորություն կտա բացահայտել համակարգերում գրագողության խորքային շերտերը, ձեռնամուխ լինել արդյունավետ միջոցների ձեռնարկմամբ դրա դրսևորումների հաղթահարմանը,
- ակադեմիական հաստատություններում ակադեմիական ազնվության, պլագիարիզմի համար երկարաժամկետ, չափելի զարգացման ռազմավարություններ և նպատակներ սահմանելը, որոնք ներառված կլինեն ինչպես առանձին կարգերում, այնպես էլ հաստատությունների որակի ապահովման ձեռնարկներում և ռազմավարության պլանում, օրինակ՝փաստաթղթերում,
- գրագողության դեմ պայքարի քաղաքականություն մշակելը, որը արտահայտված կլինի ռազմավարության մեջ:

Գրագողության կանխարգելման ստանդարտ կանոնների կամ կարգի ներդրումից զատ, անհրաժեշտ է, որպեսզի մասնագիտացումների կրթական ծրագրերը ևս նպատակաուղղված լինեն ակադեմիական ազնվության սկզբունքը գիտակցող և չխախտող մասնագետի ձևավորմանը: Անհրաժեշտ է նաև, որ գրագողության վերաբերյալ կանխարգելման կարգը անդրադարձ կատարի այնպիսի հարցերի, որոնց շնորհիվ հետազոտողը կհասկանա, որ

- պետք է իր ձայնը տարբերվի մյուսներից,
- պարտադիր չէ, որ դառնա առանձնահատուկ գաղափարակրող, բայց պետք է լինի ինքնուրույն, սովորի ըստ պատշաճի գնահատել ուրիշների աշխատանքները, համադրել տարբեր փաստարկներ և կարողանա սեփական եզրահանգումներ կատարել,
- պետք է խուսափել պլագիարիզմից, որովհետև ինքը պետք է համակերպվի առավելագույնը ամենաբարձր որակի արդյունք տալու մտքին,
- ակադեմիական համայնքի բոլոր անդամները պետք է ճանաչեն իրենց պարտքը գաղափարների, բառերի և տվյալներ ստեղծողների նկատմամբ, որոնք հիմք են ապահովում իրենց սեփական աշխատանքի համար,
- գիտակցի, որ գրագողությունը անբարոյական է և կարող է լուրջ հետևանքներ ունենալ իր ապագա կարիերայի վրա:

համակարգում: Բաց հասարակության հիմնադրամներ–Հայաստան, էջ 2:

Лия Тевосян
Помощник заведующего юридической кафедры Международного университета Евразия

ПЛАГИАРИЗМ КАК ВЫЗОВ. ПРЕДОСТЕРЕЖЕНИЕ АКАДЕМИЧЕСКОЙ СРЕДЕ

Работа и научная добросовестность в сочетании с творческой мыслью могут стать основой продуктивной работы. Вопреки этому плагиаризм приводит к «сухости» и «бесплодию» творческого мышления.

В статье рассматриваются понятие плагиаризма, вредные последствия, способы и средства его предотвращения.

Исследование проводилось в рамках научно-исследовательского гранта предоставленного Международным университетом Евразия на тему «Общие требования к библиографическим ссылкам, правилам создания и управления информацией».

Ключевые слова: плагиат, научная добросовестность, уникальная идея, методические указания, академическая среда.

Lia Tevosyan
Assistant Professor of Law department at Eurasia International University

PLAGIARISM AS A CHALLENGE: A REMINDER FOR ACADEMIC CIRCLES

The work and academic honesty along with creative thoughts can be very efficient. In contrary, plagiarism results in “arid” and “infertile” creative mind.

The article touches upon the concept of plagiarism, its adverse consequences and the measures of its prevention.

The study has been realized within the scope of inter-university research grant of EIU, entitled “General requirements of scientific citations, rules and information management”.

Key words: plagiarism, scientific honesty, unique idea, methodological direction, academic environment.